

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА

ФОНД «ШИРАКСКИЙ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ им.
М. НАЛБАНДЯНА»



REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

«M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF
SHIRAK» FOUNDATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

3126, Գ. Гюмри, ул. П. Севака 4,
тел. (0312)2-71-99
99

3126, ք. Գյումրի, Պ. Սևակի 4, հեռ. (0312)2-71-99

3126, Gyumri, str. P. Sevak 4,
tel. (0312)2-71-99

E-mail: info@shsu.am www.shsu.am

01-24 № 398

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
նախագահ, մ. գ. դ., պրոֆեսոր Ա. Օ. Թովուզյանին

«11» 06 2026թ.

Հարգելի՛ տիկին Թովուզյան,

Ի պատասխան Ձեր՝ 27.05.2026թ.-ի N22/08.1.6-658 զրույթան՝ Ձեզ ենք ներկայացնում Աշխեն Դավթի Գյուրջինյանի «Դարձվածային միավորների ուսուցման մեթոդական համակարգը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում» թեմայով ԺԳ.00.02- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆրանսերեն)» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ առաջատար կազմակերպություն հանդիսացող «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարծիքը:

Հարգանքով՝

ՇՊՀ-ի ռեկտոր՝

Ե. Ստեփանյան

«Հաստատում եմ»

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան»

հիմնադրամի ղեկավար՝

Սերոբյան

2026թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աշխեն Դավթի Գյուրջինյանի «Դարձվածային միավորների ուսուցման մեթոդական համակարգը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում» թեմայով ԺԳ. 00. 02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆրանսերեն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է ժամանակակից լեզվադիդակտիկայի ամենակարևոր հիմնախնդիրներից մեկին՝ մասնագիտական կողմնորոշում ունեցող օտար լեզվի (ֆրանսերենի) ուսուցմանը, որը համարվում է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի գերակա ուղղություններից մեկը: Ժամանակակից լեզվակրթական հարացույցում միջմշակութային, թարգմանության ոլորտի մասնագետների պատրաստումը պահանջում է լեզվադիդակտիկական նոր մոտեցումների մշակում: Այս համատեքստում Աշխեն Դավթի Գյուրջինյանի աշխատանքը առանձնակի արժեք է ներկայացնում:

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից լեզվակրթական հարացույցում Թարգմանության և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև ֆրանսերենի մասնագետների պատրաստման գործում լեզվական միավորների խորքային իմացությունը դուրս է եկել սոսկ քերականական կանոնների սահմաններից: Ներկայացված ատենախոսությունը խիստ արդիական է, քանի որ դարձվածային միավորները (իդիոմները) հանդիսանում են ֆրանսիական լեզվամշակույթի, քաղաքական խոսույթի և դիվանագիտական վավերագրերի

իմաստային և արտահայտչական առանցքը: Առանց դրանց լիարժեք յուրացման հնարավոր չէ ապահովել համարժեք թարգմանություն և խուսափել միջմշակութային թյուրիմացություններից: Ֆրանսերենի մասնագետների համար այս աշխատանքը հիմնարար գիտական հենք է ստեղծում դասավանդման նորագույն մեթոդների ներդրման համար, իսկ ուսանողներին օգնում է զարգացնել բանավոր ու գրավոր խոսքի հմտությունները:

Ատենախոսության վերնագիրը համապատասխանում է դրա բովանդակությանը և կատարված ուսումնասիրության բնույթին: Ատենախոսությունը հստակ ձևակերպում է հետազոտության վարկածը, նպատակը և խնդիրները: Գյուրջինյան Ա. Դ.-ի ատենախոսության կառուցվածքը բավականին ճիշտ է ներկայացված, ինչը հնարավորություն է տալիս հետևել հետազոտության ներքին տրամաբանությանը:

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և ներառում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություն, հղումների ցուցակ: Հեղինակի կողմից ընտրված ուսումնասիրության տրամաբանությունը, գլուխների հաջորդականությունը և բովանդակությունը թույլ են տալիս խորապես և որակապես բացահայտել հայտարարված թեման:

Ներածությունը ներառում է տեսական ընկալման համար անհրաժեշտ բոլոր խնդրահարույց տարրերը: Հեղինակը ձևակերպել է ուսումնասիրության օբյեկտի և առարկայի իր տեսլականը, որի հետ կարելի է ամբողջությամբ համաձայնել: Նպատակը և խնդիրները հստակ ձևակերպված են և հարցեր չեն առաջացնում: Պաշտպանության համար ներկայացված դրույթները ամբողջությամբ ներկայացված են և իրենց բացահայտումն են գտնում ատենախոսության հիմնական տեքստում: Ատենախոսության հիմնական մասի կառուցվածքը մտածված է:

Առաջին գլխում՝ *«Դարձվածային միավորների ուսուցման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում»* դիտարկվում են առաջին գլխի տեսական նյութն ու ամփոփիչ եզրակացությունը, որոնք վկայում են հետազոտության մեծ արժեքի մասին: Հեղինակը հաջողությամբ սահմանել է դարձվածային միավորների ընտրության հիմնարար չափանիշները և

սկզբունքները (թեմատիկ, հաղորդակցական, արժեքային, լեզվամշակութային, հաճախականության և համարժեքության)՝ առաջ քաշելով բնագրայության (աուտենտիկության) սկզբունքը, ինչպես նաև կարևորել դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունները (վերձանաչողական, ճանաչողական, փոխհաստուցման):

Սա թույլ է տալիս բացահայտել դարձվածքների հասկացութային ու պատկերային հիմքերը, ինչը նպաստում է ֆրանսիացիների լեզվամտածողության խորքային ընկալմանն ու թարգմանական տրանսֆորմացիաների ճիշտ կիրառմանը:

Երկրորդ գլխում՝ *«Ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման առավել նպատակահարմար մոդելը և նրա արդյունավետության հիմնավորումը փորձարարական ուսուցման միջոցով»* առաջարկվող մեթոդական համակարգը պատրաստի, կիրառական գործիքակազմ է ֆրանսերեն դասավանդողների համար: Հեղինակը ներկայացրել և փորձարկել է ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և ռազմավարությունների (ճանաչողական, մենտոնիկ, իմաստի կռահման, վերբալիզացիոն և փոխհաստուցման) մի ամբողջական համալիր. քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան (ԽԻԿ համակարգ), նախագծային մեթոդը և ինտենսիվկենտրոն տեխնոլոգիան, խաղային և ռեֆլեքսիվ տեխնոլոգիաները (ներառյալ՝ խաղայնացումը/գեյմիֆիկացիան):

Հետազոտության արդյունքների հավաստիությունը լիովին ապահովված է, քանի որ աշխատանքում նշված համակարգը 2024-2026թթ. ընթացքում պաշտոնապես ներդրվել և փորձարկվել է Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանի Թարգմանության և Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետների ուսանողների շրջանում՝ ապահովելով նրանց թարգմանական և հաղորդակցական կարողությունների ակնառու աճ:

Պետք է նշել հանգամանալից եզրակացությունը, որն ամփոփում է հետազոտության արդյունքները, եզրակացություններ են արվում, որոնք բխում են աշխատանքի հիմնական բովանդակությունից:

Աշխատանքի տեսական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը հիմնված են օտար լեզուների ուսուցման ժամանակակից հաղորդակցական, ճանաչողական և համակարգային մոտեցումների

վրա: Ատենախոսության գիտական նորույթը դարձվածքների ուսուցման դիտարկումն է ճանաչողական (կոգնիտիվ) մոտեցման շրջանակներում՝ որպես մենտալ բառապաշարի ձևավորման կարևոր բաղադրիչ: Հեղինակը հիմնավորում է, որ դարձվածքների նպատակային ուսուցումը նպաստում է ուսանողների միջմշակութային, լեզվամշակութաբանական և թարգմանական կոմպետենցիաների զարգացմանը, ինչպես նաև տեսականորեն ճշգրտում է դրանց ուսուցման ռազմավարությունները:

Աշխատանքի գիտամեթոդական նշանակությունն արտահայտվում է դարձվածային միավորների ուսուցման տեսական հիմքերի, դրանց ընտրության, դասակարգման և ուսուցման սկզբունքների գիտական հիմնավորմամբ: Մշակված մեթոդական համակարգը ներառում է ուսուցման նպատակների, բովանդակության, մեթոդների, միջոցների և գնահատման բաղադրիչների փոխկապակցված ամբողջություն, ինչը վկայում է հետազոտության համակարգային բնույթի մասին:

Ատենախոսության մանկավարժական արժեքը պայմանավորված է սովորողների հաղորդակցական կարողությունների, լեզվամշակութային գիտելիքների և մասնագիտական հաղորդակցական կոմպետենտության զարգացմանն ուղղված մեթոդական լուծումներով, որոնք նպաստում են ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և լեզվական կարողությունների գործնական կիրառելիության բարձրացմանը:

Հատկանշական է նաև, որ հետազոտությունը հիմնված է ժամանակակից կրթական հարացույցների՝ կոմպետենտահեն, հաղորդակցական և սովորողակենտրոն մոտեցումների վրա, ինչը նպաստում է ոչ միայն լեզվական գիտելիքների, այլև միջմշակութային հաղորդակցության, մասնագիտական համագործակցության և ինքնուրույն լեզվագործունեության հմտությունների զարգացմանը:

Ընդհանուր ստմամբ, ատենախոսությունը համապատասխանում է արդի կրթության պահանջներին, ունի տեսական, գիտամեթոդական և գործնական բարձր արժեք, իսկ ստացված արդյունքները կարող են նպաստել օտար լեզուների

դասավանդման մեթոդիկայի հետագա զարգացմանը և մասնագիտական ֆրանսերենի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Գործնական նշանակությունը և արդյունքների ներդրումը: Հետազոտությունն ունի ընդգծված կիրառական արժեք: Առաջարկվող ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման մոդելն ապահովում է դարձվածային միավորների փուլային ներմուծումը, յուրացումն ու կիրառման խորացումը: Ինչպես ցույց են տվել փորձարարական ուսուցման արդյունքները, որոնք իրականացվել են Վ. Բյուսովի անվան պետական համալսարանի Թարգմանության և Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետներում, առաջարկվող մոդելի կիրառումը նպաստում է ուսանողների դարձվածային պաշարի հարստացմանը, ինչպես նաև նրանց բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը: Հեղինակի կողմից մշակված տեքստերի և առաջադրանքների համակարգը, ուսուցման կազմակերպման մեթոդական մոտեցումները, ինչպես նաև փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքների համեմատական վերլուծությունը կարող են արդյունավետորեն կիրառվել բարձրագույն ուսումնական հաստատություններում ֆրանսերենի դասավանդման, ինչպես նաև օտար լեզուների ուսուցման ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակման գործընթացում:

Դիտողություններ և առաջարկություններ: Ըստ արժանվույն գնահատելով Աշխեն Գյուրջինյանի ատենախոսությունը, կցանկանայինք, այդուհանդերձ, որոշ հարցերի շուրջ ներկայացնել մեր մտորումներն ու առաջարկները.

1. Ցանկալի կլիներ աշխատանքի գործնական մասում տալ ավելի հստակ մեթոդական հանձնարարականներ այն մասին, թե ինչպես կարելի է կանխել միջլեզվական ինտերֆերենցիան այն դեպքերում, երբ ֆրանսերեն և հայերեն դարձվածքների պատկերային հիմքերը կտրուկ տարբերվում են միմյանցից:
2. Երկրորդ գլխում մատնանշված ինտերակտիվ մեթոդների և խաղայնացման համատեքստում ֆրանսերենի մասնագետների համար օգտակար կլինեն, եթե հեղինակը հավելվածով ներկայացնեք թվային հարթակների (Quizlet, Kahoot) կիրառմամբ դարձվածքների ամրապնդման կոնկրետ մեթոդական քայլաշարեր, խաղայնացման կոնկրետ օրինակներ:

3. Հաշվի առնելով Թարգմանության, Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետների ուղղվածությունը՝ ցանկալի կլիներ աշխատանքի գործնական մասում ավելի մեծ տեղ հատկացնել եռալեզու (ֆրանսերեն-անգլերեն-հայերեն) դարձվածաբանական գուգահեռների քննությանը, քանի որ ուսանողները ֆրանսերենն ուսումնասիրում են անգլերենին գուգահեռ:
4. Աշխատության մեջ նկատվում են մատենագիտության ձևավորման որոշ անճշտություններ (էջ 2, 11, 15, 93, 98, 101, 109 և այլն): Ցանկալի կլիներ համարակալել և վերնագրել աղյուսակները:

Ներկայացված հարցերն ու դիտողությունները, այնուամենայնիվ, ունեն մասնավոր խորհրդատվական բնույթ, չեն ազդում ուսումնասիրության հայեցակարգային հիմքի վրա և ոչ մի կերպ չեն նվազեցնում աշխատանքի բազմաթիվ առավելությունները:

Ընդհանուր առմամբ՝ ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ամբողջական և գիտականորեն հիմնավորված հետազոտություն, որն առանձնանում է իր արդիականությամբ, տեսամեթոդական հիմնավորվածությամբ և տեսագործական նշանակությամբ:

« Դարձվածային միավորների ուսուցման մեթոդական համակարգը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում » թեմայով ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Աշխեն Դավթի Գյուրջինյանը, արժանի է իր հայցած ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆրանսերեն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2026թ. հունիսի 10-ի «Օտար լեզուներ և գրականություն» և «Մանկավարժություն» ամբիոնների համատեղ նիստում:

Նիստին մասնակցել են մ.գ.դ, պրոֆեսորներ Ա. Մկոյանը, Ռ. Մարգոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Վ. Սաֆյանը, Լ. Ղուկասյանը, Մ. Հարությունյանը, Թ. Մելիքյանը, Լ. Տոնոյանը, Օ. Հարոյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ.


թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զադոյանը, Շ.Ալեքսանյանը, Ն. Նալբանդյանը
դասախոսներ Գ. Հարությունյանը, Մ. Մանուկյանը, Գ. Գալստյանը:

Օտար լեզուների և գրականության
ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ՝



Վ. Սահյան

Մանկավարժության
ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ՝



Լ. Ղուկասյան

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ Վ. Սահյանի և
մանկավարժության ամբիոնի վարիչ Լ. Ղուկասյանի ստորագրությունները
հաստատում եմ:

ՇՂՀ-ի գլխավոր քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝



Ի. Հովհաննիսյան

10.06.2026թ.

